Հավելված 1

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 16-ի
N 43-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պլանով կարգավորվում են ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի (այսուհետ նաև՝ Համայնք) վարչական տարածքում աղբահանության աշխատանքների իրականացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն պլանի գործողությունը տարածվում է Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձանց (ներառյալ անհատ ձեռնարկատեր և արտոնագրային վճար վճարող) իրավաբանական անձանց, հիմնարկների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալի, անհատույց օգտագործողի վրա:
3. Աղբահանությունը վճարովի է: Վճարի չափը, վճարման կարգն ու ժամկետները սահմանվում են Համայնքի ավագանու կողմից:
4. Համայնքի ավագանին կարող է սահմանել աղբահանության վճարի արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար: Համայնքի ավագանու կողմից անհատական արտոնություններ սահմանելն արգելվում է:
5. Աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական նպատակները և գործընթացի կազմակերպման սկզբունքներն են՝

5.1. նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի վտանգավոր ներգործությունը.

5.2. չթույլատրել տարածքների աղտոտում, աղբակույտերի առաջացում և մաքրել տարածքը աղբից.

5.3. աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը.

5.4. պարտադիր և պարբերաբար իրականացնել աղբահանություն և սանիտարական մաքրում՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով նախատեսված սանիտարական մաքրման սխեմային համապատասխան.

5.5. ապահովել աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը և հանրային իրազեկվածությունը.

5.6. աղբահանության դիմաց գանձել վճարներ.

5.7. ստեղծել պայմաններ օգտահանման ենթակա թափոնների տեսակավորման, օգտագործման ու վերամշակման համար և նվազեցնել աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալները.

5.8. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ապահովել աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն և հանրային իրազեկվածություն.

5.9. մեքենայացնել աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները.

5.10. իրականացնել միջհամայնքային համագործակցություն.

5.11. իրականացնել սանիտարական մաքրման աշխատանքներ համայնքային բյուջեի հաշվին կամ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրի շրջանակներում:

## 2. ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՊԱՀՄԱՆ, ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ

1. Կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է այդ նպատակով նախատեսված տեղերում, աղբանոթներում, աղբամաններում, աղբարկղերում, աղբի հավաքման կոնտեյներներում (այսուհետ՝ աղբամաններ):
2. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափերի աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած աղբամաններում կամ կոնտեյներներում կամ աղբահանության վճար վճարողի նախատեսած՝ իրեն պատկանող համապատասխան տարածքում, այնպես, որ ՀՈԱԿ-ը հնարավորություն ունենա պատշաճ հավաքել և տեղափոխել աղբը: Վճարողների պահանջով համայնքը աղբամանները կարող է տրամադրել վարձակալության հիմունքներով:
3. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 10մ և ոչ ավելի, քան 50մ հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում աղբամանները տեղադրվում են մարդկանց զանգվածային կուտակման վայրերից ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա:
4. Աղբանոթների տեղադրումը պարտադիր է ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, զբոսայգիներում, պուրակներում, կայարաններում, շուկաներում, տոնավաճառներում, հանգստի գոտիներում և այլ վայրերում:
5. Փողոցներում աղբանոթների միջև ապահովվում է ոչ ավելի, քան 70 մետր հեռավորություն: Պուրակներում, զբոսայգիներում, աղբանոթների քանակությունը որոշվում է 800 քառակուսի մետր մակերեսին 1 աղբանոթի հաշվարկով: Գլխավոր զբոսուղիներում աղբանոթների միջև հեռավորությունը կազմում է 40 մետրից ոչ ավելի:
6. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերի բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցների մոտեցման համար հարմար դիրքով: Աղբամանները չեն տեղադրվում փողոցների մայթերի և սիզամարգերի վրա:
7. Աղբամանները աղբով լցվում են ծավալի 7/8–ից ոչ ավելի մակարդակով:
8. Աղբահանությունը իրականացվում է ՀՈԱԿ-ի կողմից: ՀՈԱԿ-ը աղբը տեղափոխում է աղբավայրեր, հատուկ հատկացված տեղեր, որոնք գտնվում են Համայնքի հսկողության ներքո:
9. Սեզոնային, տոնական օրերի կամ այլ հանգամանքով պայմանավորված աղբի ավելացման դեպքում ՀՈԱԿ-ը պետք է լրացուցիչ աղբամաններ տեղադրի 10 աշխատանքային օրվա ընթացքում կամ ավելացնի աղբահանության հաճախականությունը:
10. ՀՈԱԿ-ը թափոնների հավաքումն ու փոխադրումն իրականացնում է բազմաբնակարանային շենքերի համար առնվազն 3 օրը մեկ անգամ, անհատական բնակելի/առանձնատների համար առնվազն 2 օրը մեկ անգամ՝ շամը 06:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում՝ սահմանված սխեմային համապատասխան, իսկ շրջիկ աղբատար մեքենաների դեպքում՝ ոչ պակաս, քան օրը մեկ անգամ՝ ժամը 08:30-ից 19:30-ը՝ սահմանված սխեմային համապատասխան:
11. Կազմակերպությունների և առևտրի օբյեկտների աղբահանությունն իրականացվում է Համայնքի բնակելի թաղամասերում իրականացվող աղբահանության հետ զուգահեռ:
12. Սահմանված ժամանակացույցին և տեղերին համապատասխան իրականացվում է Համայնքի փողոցների մաքրում՝ ավլելու և ջրով լվանալու միջոցով: Փողոցների սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման ժամերն են ոչ շուտ քան 06:00-ն և ոչ ուշ քան 16:00-ն:
13. Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ աղբահանությունն իրականացնողի կողմից մաքրվում և տեղափոխվում է կոնտեյներների հարակից տարածքի աղբը: Աղբահանության ժամանակ տեղափոխվում են նաև աղբակույտերը և տերևակույտերը:
14. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանվում են աղբաթափման վայրում՝ աղբահանությունն իրականացնողի կողմից՝ ախտահանիչ լուծույթներով:

15. Աղբահավաք կոնտեյներները լվացվում և ախտահանվում են առնվազն ամիսը մեկ անգամ աղբահանությունն իրականացնողի կողմից:
16. Աղբամանները տեղադրվում են ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, զբոսայգիներում, պուրակներում, շուկաներում և այլն:
17. Կրպակներում առևտուր իրականացնող սուբյեկտներն իրենց հարակից տարածքները պահում են պատշաճ սանիտարական վիճակում:
18. Բնակելի շենքերի առաջին հարկերում տեղակայված առևտրի և սպասարկման օբյեկտների մուտքերի հարակից տարածքները պահվում են պատշաճ սանիտարական վիճակում, չեն կուտակում ապրանքների արկղեր կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:
19. Աղբը տեղադրվում է գործող աղբավայրում:
20. Չի թույլատրվում՝
   20.1. աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում.
   20.2. սպառման թափոնների այրումը.
   20.3. աղբի համար նախատեսված վայրերում տեղադրելու անօգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, այլ վտանգավոր նյութեր և թափոններ: Աղբի համար նախատեսված վայրում օգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր, կամ այլ վտանգավոր թափոններ (որոնք սահմանված են «Թափոնների մասին» օրենքում, ինչպես նաև իրենց բնակարանում կամ բնակելի տանը օգտագործված այնպիսի իրեր, առարկաներ, նյութեր կամ այլ թափոններ տեղադրելու դեպքում, երբ համապատասխան բժշկական ծառայությունների կոմից հայտնաբերվել են վարակիչ հիվանդություններ կամ այլ համաճարակային ինֆեկցիաներ), տեղադրող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
   20.4. աղբի համար նախատեսված վայրում տեղադրել սատկած կենդանու մարմին: Սատկած կենդանու մարմինը պետք է արագորեն հեռացվի համայնքի առողջապահության պատասխանատուի ցուցումով: Եթե սատկած կենդանու տերը հայտնի է, ապա հեռացումն իրականացվում է նրա կողմից, իսկ եթե տերը հայտնի չէ՝ համայնքապետարանի պահանջով՝ աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից
21. Համայնքի բնակիչները և իրավաբանական անձանց աշխատակիցները պարտավոր են՝
   21.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և հանրորեն ընդունված սանիտարական և հակահամաճարակային կանոնների համաձայն՝ մաքուր պահելու համայնքի ցանկացած հանրային տարածքը՝ փողոցները, մայթերը, պուրակները, այլ հանրային տարածքներ, ինչպես նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող տարածքները, առանց համապատասխան թույլտվությունների չայրել աղբը (պլաստիկ նյութերը և առարկաները, այդ թվում՝ պոլիէթիլենային տոպրակները և շշերը, ներկանյութերը և յուղերը, ռետինե և կաշվե իրերը և նյութերը, այլ վտանգավոր թափոնները), որպեսզի դրանք պատճառ չհանդիսանան հանրային տարածքներում աղբի չնախատեսված վայրում թափման, կուտակման և պահման համար:
   21.2. աղբը աղբամանների կամ շրջիկ աղբատար մեքենաների մեջ լցնել սահմանված ձևով.
   21.3. աղբամանների կամ շրջիկ աղբատար մեքենաների մեջ չլցնել վտանգավոր թափոններ, շինարարական, մեծածավալ/մեծամասշտաբ աղբ, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով վտանգավոր են մարդու առողջության և շրջակա միջավայրի համար և պահանջում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ միջոցներ.
   21.4. չտեղափոխել, չտեղահանել կամ չշրջել աղբամանները.
   21.5. թափոնները լցնել միայն աղբամանների կամ շրջիկ աղբատար մեքենաների մեջ.

21.6. խոշոր եզրաչափի աղբի գոյացման դեպքում պատվիրել նշված աղբի՝ համապատասխան կոնտեյներով փոխադրումը.

21.7. սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը:

22. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, ըստ անհրաժեշտության, ՀՈԱԿ-ին տեղեկացնում են, տվյալ տարածքի աղբահանությունը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ աղբամանների թվաքանակի մասին:

23. Շինարարական և/կամ խոշոր եզրաչափի աղբի առաջացման դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են ՀՈԱԿ-ին ծանուցել աղբի հեռացման միանգամյա ծառայություն մատուցելու անհրաժեշտության մասին: Շինարարական և խոշոր եզրաչափի աղբ առաջացնողները ազատվում են աղբահանության վճարից, եթե աղբը փոխադրում և տեղափոխում են սեփական միջոցներով՝ համապատասխան թույլտվության հիման վրա:

## 3. ԱՂԲԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Աղբի, թափոնների կուտակման և հավաքման համար նախատեսված աղբամանները պետք է՝

1) Պատրաստված լինեն դիմացկուն մետաղից, ծանր պլաստիկից, սեղմված/խտացված մանրաթելից (ֆիբր) կոնստրուկցիայից կամ այլ նյութից՝ նշագծումով, թե ինչ տեսակի և որքան աղբ կարելի է լցնել աղբամանի մեջ.
2) Ունենան Համայնքի կողմից սահմանված հատուկ արտաքին տեսք (կափարիչ, փական, բռնակներ, անիվ) պատշաճ բեռնաթափման նպատակով.
3) Ունենան կլոր կամ ուղղանկյուն տեսք՝ 0.4-ից մինչև 1.1 խորանարդ մետր տարողությամբ, բայց ընդհանուր քաշը (աղբի հետ միասին)՝ ոչ ավել, քան 700 կիլոգրամ (նկատի ունենալով, որ աղբատար մեքենայի մանիպուլյատորի առավելագույն բեռնաբարձման քաշը 700 կիլոգրամ է).
4) Ունենան դրանց մեջ կուտակցվող թափոնների համապատասխան ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններ՝ դրանց բացասական ներգործությունից մարդու առողջությունը ու շրջակա միջավայրը պահպանելու համար.
5) Ունենան համապատասխան գույն (մեկը մյուսից առանձնացող), որը հնարավորություն կտա աղբահանության ծառայությունից օգտվող անձանց աղբը տեսակավորված հավաքելու համապատասխան աղբամանների մեջ:

## 4. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Համայնքում աղբահանության վճար վճարողներ են Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:
2. Համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և գրանցումը, աղբահանության դիմաց վճարների հաշվարկումը, վճարների գանձումն ու դրանք համայնքի բյուջեի համապատասխան հաշվի համարին մուտքագրումը կազմակերպվում է Համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցի(ների) կողմից:
3. Համայնքը վարում է էլեկտրոնային հաշվառման մատյաններ՝

3.1. ֆիզիկական անձանց համար, որտեղ գրանցվում են անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և/կամ բնակվող յուրաքանչյուր բնակչի տվյալները, որոնք հավաստվում են անձը հաստատող փաստաթղթով, բնակչության

պետական ռեգիստրի տրամադրած տեղեկանքով, համատիրությունների և թաղային լիազորների տրամադրած տեղեկանքներով: Այդ մատյաններում գրանցվում են նաև ըստ հասցեի բնակելի նշանակության անշարժ գույքի տվյալները՝ սեփականության կամ վարձակալության (օգտագործման) իրավունքը հաստատող փաստաթղթի (վկայականի) հիման վրա.

3.2. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար, որտեղ տվյալները գրանցվում են իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տրամադրած վկայականի և անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության (օգտագործման) իրավունքը հաստատող փաստաթղթի (վկայականի) հիման վրա.

3.3. աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրի հաշվառման համար:

4. Աղբահանության վճար վճարողների հաշվառման տվյալների հիման վրա Համայնքը նրանց հետ կնքում է պայմանագրեր (պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն սույն պլանին կից ներկայացված հավելված N 4-ի և հավելված N 5-ի): Պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարվում են աղբահանության վճարների դրույքաչափերի, աղբահանության պայմանների, աղբահանության վճար վճարողների հաշվառման տվյալների փոփոխման դեպքում: Աղբահանության վճարի զեղչի արտոնությունից օգտվողների հետ կնքվում է լրացուցիչ համաձայնագիր, որը հանդիսանում է պայմանագրի բաղկացուցիչ մասը:
5. Աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրի մեկ օրինակը պահվում է Համայնքապետարանում, որին կցվում են հաշվառման համար ներկայացված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև աղբահանության վճարի զեղչի արտոնություն տվող փաստաթղթերի պատճենները:
6. Յուրաքանչյուր տարվա հունվար ամսին Համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից ստուգվում են աղբահանության վճար վճարողների էլեկտրոնային հաշվառման մատյաններում գրանցված տվյալների համապատասխանությունը առկա վիճակին և կատարված աշխատանքների արդյունքների մասին՝ մինչև փետրվարի 5-ը, Համայնքի ղեկավարին ներկայացվում է հաշվետվություններ: Հաշվետվությունների հիման վրա հաշվառման մատյաններում կատարվում են փոփոխված տվյալների համապատասխան գրանցումներ, որոնք հիմք են հանդիսանում աղբահանության վճար վճարողների հետ նոր պայմանագրի կնքման կամ կնքված պայմանագրերում փոփոխություններ և/կամ/ լրացումներ կատարելու համար:
7. Աղբահանության վճար վճարողները՝ իրենց հաշվառման տվյալների փոփոխության (հաշվառված կամ բնակվող անձանց թվի փոփոխություն, աղբահանության վճարի զեղչի արտոնության իրավունքի ձեռք բերում կամ կորուստ և այլն) դեպքում պարտավոր են փոփոխության կատարման օրվանից 15-օրյա ժամկետում հայտնել Համայնքին՝ կնքված պայմանագրերում համապատասխան փոփոխություն կատարելու համար:
8. Աղբահանության վճարի հաշվարկման համար հիմք է հանդիսանում կնքված պայմանագիրը:
9. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը օրացուցային ամիսն է:
10. Յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը պետք է վճարվի օրենքով սահմանված կարգով՝ մինչև հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:
11. Աղբահանության վճարի վճարումը սույն կարգով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0,075 տոկոսի չափով, դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար: Նախատեսված տույժերը հաշվարկվում և հաշվառվում (գանձվում) են աղբահանության վճարի վճարման ժամկետին հաջորդող ամսվա 1-ից:

## 4. ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Աղբի հավաքման և փոխադրման պայմաններն և կարգն ուղղված են աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական նպատակներին և գործընթացի կազմակերպման սկզբունքներին:
2. Վեդի համայնքի Վեդի քաղաքի և գյուղական բնակավայրերի աղբահանության և սանմաքրման աշխատանքները իրականացվում է «Վեդի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից՝ համաձայն Վեդի համայնքի աղբահանության աշխատանքների իրականացման նվազագույն ժամանակացույցին: Վեդի համայնքի Վեդի քաղաքի և գյուղական բնակավայրերի սանիտարական մաքրման աշխատանքային պլանում ընդգրկված է նաև՝
   - Պանթեոն/Զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանաքարերը
   - 1915թ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան
   - Ինչպես նաև առկա բոլոր հուշարձաններն ու կիսանդրիները:
3. Աղբի փոխադրմանը ներկայացվող պահանջներն են՝
   3.1. աղբը փոխադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրեր կամ ենթարկվում է վերամշակման.
   3.2. աղբավայրերում աղբի փոխադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման և սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ.
   3.3. արգելվում է աղբը փոխադրել դրա համար չնախատեսված վայրերում:

4. Տնտեսվարող սուբյեկտներն իրենց հարակից տարածքները պահում են պատշաճ սանիտարական վիճակում, որտեղ չեն պահեստավորում ապրանքներ, տարաներ կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:
5. Աղբի փոխադրումն իրականացնում է «Վեդի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ը՝ սույն կարգի համաձայն: Աղբի փոխադրումը պետք է կազմակերպվի աղբատար փոխադրամիջոցներով, որոնց կառուցվածքը բացառում է շրջակա միջավայրի աղտոտումը: Աղբի փոխադրումն աղբարկղերից և աղբամաններից պետք է իրականացնել մինչև դրանց ամբողջությամբ լցվելը: Աղբարկղերից և աղբամաններից աղբի հեռացնելու ժամանակ աղբահանությունն իրականացնող կազմակերպության կողմից մաքրվում և տեղափոխվում է աղբարկղերի հարակից տարածքի աղբը (աղբարկղերից մինչև 3-5 մ շառավղով): Աղբահանության ժամանակ տեղափոխվում են նաև աղբակույտերը և տերևակույտերը: Դրանց այրումն արգելվում է:
6. Որպես աղբավայր շահագործվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի աղբավայրը, որը քաղաքի կառուցապատման գոտուց հեռու է շուրջ 2,5 կմ:
7. Խոշոր եզրաչափի աղբի փոխադրման համար որպես աղբավայր շահագործվում է Հայաստանի Հանրապետության Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի աղբավայրը, որը քաղաքի կառուցապատման գոտուց հեռու է շուրջ 2,5 կմ:
8. Աղբավայրի խնամքը՝ աղբավայրի հարթեցումը, հողով ծածկումը, մտնում է աղբահանություն իրականացնող ՀՈԱԿ-ի պարտականությունների մեջ :
9. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանվում են աղբաթափման վայրում՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից ամիսը 1 անգամ: Ախտահանման համար օգտագործվում է քլորակրի (10 %), լիզոլի (5-8%) կրեոլինի (5-8%), նավթալիզոլի (10-15%), ֆենոլի (3-5%) նատրիում մետասիլիկատի (1-3%) կամ Հայաստանի Հանրապետության «Դեղերի մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման կարգը հաստատելու մասին» N 581 որոշմամբ սահմանված կարգով ներմուծված վարակազերծիչ միջոցներով, ըստ վերջիններիս ուղեկցող հրահանգների:
10. Աղբահանություն իրականացնող ՀՈԱԿ-ն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

11. Աղբահանություն իրականացնող ՀՈԱԿ-ի պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Վեդի համայնքի ղեկավարը:
12. Աղբահանության և սանիտարական մաքրման կանոնները խախտելը, չսահմանված վայրերում սպառման թափոններ թափելը առաջացնում է պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված կարգով:

## 5. Տեղական պլանի հիմնական գործողությունները

1. Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը դիտել որպես պարտադիր խնդիր:
2. <<Վեդի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի գործունեության ընդլայնում:
3. Համայնքում աղբահանության սխեմայի կազմում և հաստատում:
4. Նոր աղբահավաք մեքենաների և աղբամանների ձեռքբերում:
5. Տեխնիկայի վերանորոգում:
6. Իրականացնել աղբի տեղափոխումը աղբավայր:

## Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման սխեմա

1) Վեդի համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականցվում են թվով 8 հատ աղբատար մեքենաների (որոնցից 4-ը՝ հարմարեցված) միջոցով:
2) Յուրաքանչյուր աղբատար մեքենայի աղբահանության երթուղին ընդգրկում է՝ ավտոկայանատեղի – լիցքավորման կետ – նախատեսված վայր – աղբավայր – ավտոկայանատեղի:
3) Աղբարկղերից աղբի հավաքումն և փոխադրումն աղբավայր կատարվում է շրջիկ աղբատար մեքենաներով:
4) Սանիտարական մաքրման աշխատանքներն ավլելու միջոցով կատարվում են երկուշաբթի-ուրբաթ օրերի հաճախականությամբ:
5) Համայնքի հուշարձանների և բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ու խաղահրապարակների սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են՝ Վեդի քաղաքը ամենօրյա, իսկ վարչական բնակավայրերը՝ ոչ պակաս,քան 10 օրը մեկ հաճախականությամբ: Բազմաբնակարան բնակելի շենքերի բակային և խաղահրապարակների տարածքը կազմում է շուրջ **181006** մ$^2$:
6) Վեդի քաղաքի սանիտարական մաքրումն իրականացվում է հրապարակներում, հուշարձանամերձ տարածքներում և այգիներում, բոլոր կենտրոնական փողոցներում:
7) Աղբավայր տեղափոխված աղբակույտերը մեկ ամսվա ընթացքում 4-5 անգամ ծածկվում են գրունտային հողով և տեղում հարթեցվում:

### ՍԽԵՄԱ

### ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ

| h/h | Մաքրվող փողոցների,բակերի, հրապարակների, հուշարձանների և զբոսայգիների անվանումը | Մաքրվող փողոցների, երկարությունները / մ / | Մաքրվող տարածքների մակերեսները / քմ / | Շաբաթվա օրեր | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Երկ. | Երեք. | Չորեք. | Հինգ | Ուրբ. | Շաբ. | Կիր. | |
| | **Մշտապես մաքրվող** | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.** | **տարածքներ<br>Վեդի քաղաք** | | | | | | | | | |
| 1.1 | Արարատյան փողոց | 3200 | 16000 | + | + | + | + | + | | |
| 1.2 | Թումանյան փողոց | 700 | 3850 | + | + | + | + | + | | |
| 1.3 | Գայի փողոց | 900 | 4500 | + | + | + | + | + | | |
| 1.4 | Պուշկինի փողոց | 200 | 1000 | + | + | + | + | + | | |
| 1.5 | Սարիբեկ Վարդանյան փողոց | 360 | 1440 | + | + | + | + | + | | |
| 1.6 | Գայի նրբանցք | 190 | 760 | + | + | + | + | + | | |
| 1.7 | Հուշահամալիր | | 1345 | + | + | + | + | + | | |
| 1.8 | Քաղաքային զբոսայգի | | 4000 | + | + | + | + | + | | |
| 1.9 | Արարատյան փողոցի հարակից պուրակ | | 1500 | + | + | + | + | + | | |
| 1.10 | Արարատյան փողոցի կից խաղահրապարակ | | 1100 | + | + | + | + | + | | |
| 1.11 | Արցախի փողոց | 300 | 600 | + | + | + | + | + | | |
| **2.** | **Շենքերի բակերը և հարակից տարածքները.** | | | | | | | | | |
| | **Վեդի քաղաք** | | | | | | | | | |
| 2.1 | Պուշկինի շենքի բակ | | 600 | + | + | + | + | + | | |
| 2.2 | Թումանյան | | 2500 | + | + | + | + | + | | |
| 2.3 | Արարատյան | | 11710 | + | + | + | + | + | | |
| 2.4 | Արարատյան 46 | | 150 | + | + | + | + | + | | |
| 2.5 | Գայի | | 12055 | + | + | + | + | + | | |
| 2.6 | Կասյան | | 12330 | + | + | + | + | + | | |
| 2.7 | Առաքել Սիմոնյան հրապարակ | | 2000 | + | + | + | + | + | | |
| 2.8 | Քաղաքային հին գերեզմանատուն | | 30000 | + | | | | | | |
| 2.9 | Նոր գերեզմանատուն | | 20000 | + | | | | | | |
| 2.10 | Մեքենայական լվացման աշխատանքներ ջրցան մեքենայով | | 26000 | + | + | + | + | + | | |
| 2.11 | Ճանապարհների մեքենայական մաքրում(ավլում) | | 15000 | + | + | + | + | + | | |
| **3** | **Վեդի քաղաքի փողոցներ** | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| 3.1 | Սարիբեկ Վարդանյան փ. | 2276 | 4552 | + | | | | | | |
| 3.2 | Պարոնյան փողոց | 419 | 838 | + | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.3 | Տերտերյան փողոց | 421 | 842 | + | | | | | | |
| 3.4 | Դ. Վարուժան փողոց | 432 | 864 | + | | | | | | |
| 3.5 | Հրաչյա Ներսիսյան փողոց | 1000 | 2000 | + | | | | | | |
| 3.6 | Բաղրամյան փողոց | 958 | 1916 | + | | | | | | |
| 3.7 | Գուգուշկին Ա. փողոց | 420 | 840 | + | | | | | | |
| 3.8 | Գալստյան փողոց | 433 | 866 | + | | | | | | |
| 3.9 | Հակոբյան Ա. փողոց | 1221 | 2442 | + | | | | | | |
| 3.10 | Ա. Օզանյան փողոց | 933 | 1866 | + | | | | | | |
| 3.11 | Գևորգ Չաուշ փողոց | 915 | 1830 | | + | | | | | |
| 3.12 | Ն.Ստեփանյան փողոց | 896 | 1792 | | + | | | | | |
| 3.13 | Ս. Թեհլերյան փողոց | 494 | 988 | | + | | | | | |
| 3.14 | Բազոյան փողոց | 1000 | 2000 | | + | | | | | |
| 3.15 | Կոմիտաս | 2787 | 5574 | | + | | | | | |
| 3.16 | Ս. Նիկողոսյան | 926 | 1852 | | + | | | | | |
| 3.17 | Խանջյան | 900 | 1800 | | | + | | | | |
| 3.18 | Ն. Մկրտչյան | 1900 | 3800 | | | + | | | | |
| 3.19 | Եղ. Չարենց | 900 | 1800 | | | + | | | | |
| 3.20 | Արցախի փողոց | 1000 | 2000 | | | + | | | | |
| 3.21 | 26 Կոմիսարներ | 2000 | 4000 | | | + | | | | |
| 3.22 | Գ. Մարզպետունի | 600 | 1200 | | | + | | | | |
| 3.23 | Ա. Խաչատրյան | 1000 | 2000 | | | | + | | | |
| 3.24 | Պ.Սևակ | 600 | 1200 | | | | + | | | |
| 3.25 | Հ. Շիրազ | 800 | 1600 | | | | + | | | |
| 3.26 | Պուշկինի փողոց | 520 | 1040 | | | | + | | | |
| 3.27 | Մ.Մաշտոցի փողոց | 1600 | 3200 | | | | + | | | |
| 3.28 | Կամոյի փողոց | 1000 | 2000 | | | | + | | | |
| 3.29 | Արարատյան նրբանցք | 500 | 1000 | | | | + | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.30 | Մուրացանի փողոց | | 1000 | | | | | + | | |
| 3.31 | Արամ Եղյանի նրբանցք 3 | | 400 | | | | | + | | |
| 3.32 | Արամ Եղյանի նրբանցք 2 | | 400 | | | | | + | | |
| 3.33 | Կասյան փողոց | | 2340 | | | | | + | | |
| 3.34 | Արամ Եղյան փոցոց | | 2440 | | | | | + | | |
| 3.35 | Պուշկինի փողոց | | 2640 | | | | | + | | |
| | | | | | | | | | | |
| | **ՈՒՐՑԱՁՈՐ բնակավայր** | | | երկ | երեք | չոր | հինգ | ուրբ | շաբ | կիր |
| 1. | 1-ին փողոց | 300 | 1800 | | + | | | | | |
| 2. | 10-րդ փողոց | 100 | 600 | | + | | | | | |
| 3. | 3-րդ փողոց | 440 | 2640 | | + | | | | | |
| 4. | 4-րդ փողոց | 400 | 2400 | | + | | | | | |
| 5. | 5-րդ փողոց | 360 | 2160 | | + | | | | | |
| 6. | Իսահակյան փողոց | 300 | 1800 | | + | | | | | |
| 7. | Ա. Խաչատրյան փողոց | 400 | 2400 | | + | | | | | |
| 8. | Զ. Անդրանիկի փողոց | 1300 | 7800 | | + | | | | | |
| 9. | Բաղրամյան փողոց | 760 | 4560 | | + | | | | | |
| 10. | Գ. Նժդեհ փողոց | 700 | 4200 | | + | | | | | |
| 11. | Գետափնյա փողոց | 760 | 4560 | | + | | | | | |
| 12. | Ե. Չարենցի փողոց | 300 | 1800 | | + | | | | | |
| 13. | Հ.Թումանյան փողոց | 1650 | 9900 | | + | | | | | |
| 14. | Խանջյան փողոց | 420 | 2520 | | + | | | | | |
| 15. | Ծխախոտագործների փողոց | 160 | 960 | | + | | | | | |
| 16. | Հ.Շիրազի փողոց | 600 | 3600 | | + | | | | | |
| 17. | Մ. Ղազարյան  փողոց | 240 | 1440 | | + | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18. | Մ.Մաշտոցի փողոց | 360 | 2160 | | + | | | | | |
| 19. | Գ.Մարզպետունու փողոց | 1540 | 9240 | | + | | | | | |
| 20. | Շ. Ազնավուրի փողոց | 800 | 4800 | | + | | | | | |
| 21. | Պ. Սևակի փողոց | 500 | 3000 | | + | | | | | |
| 22. | Ռ. Պետրոսյան փողոց | 420 | 2520 | | + | | | | | |
| 23. | Վ. Տերյան  փողոց | 960 | 5760 | | + | | | | | |
| 24. | Տիգրան Մեծի փողոց | 1600 | 9600 | | + | | | | | |
| 25. | Մշակույթի տան բակ | 200 | 2500 | | + | | | | | |
| 26. | Դպրոցի բակ | 800 | 4000 | | + | | | | | |
| 27. | Խաղահրապարակ | 70 | 2100 | | + | | | | | |
| | **Գինեվետ բնակավայր** | | | երկ | երեք | չոր | հինգ | ուրբ | շաբ | կիր |
| 1) | Դպրոցի տարածք | 20 | 120 | | | | | + | | |
| 2) | Հայ փոստի տարածք | 4 | 20 | | | | | + | | |
| 3) | Բուժկետի տարածք | 4 | 20 | | | | | + | | |
| 4) | Վարչական շենքի տարածք | 23 | 161 | | | | | + | | |
| 5) | Ջրոսայգու տարածք | 30 | 1800 | | | | | + | | |
| 6) | Շենքերի բակերը և հարակից տարածքները | 15 | 105 | | | | | + | | |
| 7) | Գործարանային փողոց | 700 | 4200 | | | | | + | | |
| 8) | 1-ին փողոց | 200 | 1400 | | | | | + | | |
| 9) | 2-րդ փողոց | 100 | 600 | | | | | + | | |
| 10) | 3-րդ փողոց | 850 | 5100 | | | | | + | | |
| 11) | 4-րդ փողոց | 80 | 480 | | | | | + | | |
| 12) | 5-րդ փողոց | 80 | 480 | | | | | + | | |
| 13) | 6-րդ փողոց | 80 | 480 | | | | | + | | |
| 14) | Դպրոցի փողոց | 120 | 840 | | | | | + | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15) | Ջրանցքի փողոց | 80 | 480 | | | | | + | | |
| | **Նոր Կյանք բնակավայր** | | | երկ | երեք | չոր | հինգ | ուրբ | շաբ | կիր |
| 1. | Արարատյան փողոց | 1920 | | | | | + | | | |
| 2. | Գ. Սունդուկյան փողոց | 250 | | | | | + | | | |
| 3. | Հ. Շիրազի փողոց | 190 | | | | | + | | | |
| 4. | Շիրակի փողոց | 233 | | | | | + | | | |
| 5. | Մ. Խորենացի փողոց | 720 | | | | | + | | | |
| 6. | Գ. Լուսավորիչ փողոց | 1180 | | | | | + | | | |
| 7. | Ա. Շիրակացի փողոց | 330 | | | | | + | | | |
| 8. | Հ. Պարոնյան փողոց | 220 | | | | | + | | | |
| 9. | Գ. Նժդեհի փողոց | 420 | | | | | + | | | |
| 10. | Հ. Թումանյան փողոց | 572 | | | | | + | | | |
| 11. | Ազատության փողոց | - | | | | | | | | |
| 12. | Վ. Մամիկոնյան փողոց | 381 | | | | | + | | | |
| 13. | Մ. Մաշտոցի փողոց | 735 | | | | | + | | | |
| 14. | Պ. Սևակի փողոց | 368 | | | | | + | | | |
| 15. | Ա. Խաչատրյան փողոց | 640 | | | | | + | | | |
| 16. | Զ. Անդրանիկի փողոց | 800 | | | | | + | | | |
| 17. | Մուրացանի փողոց | 265 | | | | | + | | | |
| 18. | Մ. Հերացու փողոց | 549 | | | | | + | | | |
| 19. | Ե. Չարենցի փողոց | 238 | | | | | + | | | |
| 20. | Բարեկամության փողոց | 998 | | | | | + | | | |
| 21. | Ա. Շիրվանզադե փողոց | 606 | | | | | + | | | |
| 22. | Մ. Գալշոյան փողոց | 307 | | | | | + | | | |
| 23. | Գյուղապետարանի հարակից այգին և հրապարակը | - | 2800 | | | | + | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24. | Գերեզմանատան տարածք | - | 21200 | | | | + | | | |
| 25. | Դպրոցի հարակից տարածք | - | 7900 | | | | + | | | |
| 26. | Մանկապարտեզի հարակից բակ | - | 1220 | | | | + | | | |
| | **Դաշտաքար բնակավայր** | - | | երկ | երեք | չոր | հինգ | ուրբ | շաբ | կիր |
| 1) | Անկախության փողոց | 400 | | | | + | | | | |
| 2) | Կենտրոնական փողոց | 600 | | | | + | | | | |
| 3) | Կենտրոնական 1-ին նրբ. | 150 | | | | + | | | | |
